ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուսումնական ծրագիր

Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման «Պատմություն» առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է

ՀՀ ոստիկանության կրթահամլիրի

ուսումնական կենտրոնի«Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի

01.06.2018թ-ի նիստում

ք. Երևան

2018թ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության «Պատմություն» առարկայի եռամսյա դասընթացի

Թեմա N	Թեմաների անվանումը	Ընդհանուր ժամաքանակն ըստ թեմաների	ժամաքանակն ըստ պարապմունքի ձևերի		
			դաս.	գործ.	սեմ.
1	Հայկական պետականությունը. կազմավորման և զարգացման հիմնական փուլերը /Մ.Թ.Ա. 3-րդ հազարամյակ -1375թ./	2	2		
2	Հայ ազատագրական շարժումները /15-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջ/:Հայոց եղերնը:	2	2		
3	Հայաստանի առաջին հանրապետությունը /1918-1920թ.թ/	4	2		2
4	Հայաստանի խորհրդային հանրապետությունը	2	2		
5	Հայաստանի երրորդ հանրապետությունը :	4	2		2
6	ՀՀ Ոստիկանության պատմությունը:	2	2		
Ընդամենը		*16*	*12*		*4*

Կազմեց՝
ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի
«Ընդհանուր պատրաստականություն»
կրթաճյուղի պետ , ոստ. փոխգնդապետ

_____ Ա.Ալեքսանյան

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի ուսումնական կենտրոնի
«Ընդհանուր պատրաստականություն»
կրթաճյուղի նիստում արձանագրություն
թիվ 4 01.06.2018 թ
կրթաճյուղի պետ, ոստ. փոխգնդապետ

_____ Ա.Ալեքսանյան

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան առարկայի ուսումնասիրման համար հատկացված է 16 ժամ, որից՝

- դասախոսություն - 12 ժամ,
- սեմինար - 4 ժամ,

2. «Պատմություն» առարկայի ուսուցման նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է՝ նպաստել սովորողների մոտ ազգային հիմնախնդիրները լուծելու պատրաստ հայ մարդու և քաղաքացու ձևավորմանը, դաստիարակել նրան մարդու ու ժողովուրդների բնական և պատմական իրավունքները հարգելու, ցեղասպանությունը մերժելու և դատապարտելու, վառ ու անկեղծ հայրենասիրության ոգով:

Առարկայի դասավանդման ընթացքում լուծվում են մասնագիտական ուսուցման հետևյալ խնդիրները.

- Տեսական գիտելիքներ հաղորդել Հայոց պատմության կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ, իմաստավորելու համար մեր ժողովրդի անցած ուղին, դասեր քաղելու ներկայի և ապագայի համար
- Հասնել այն բանին, որ Հայոց պատմության մասին գիտելիքներով զինված երիտասարդությունը գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, հայրենիքի բարգավաճման գործին:
- Ձևավորել սեփական գործունեությունը ազգային շահերին, մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն:

1. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

- Տալ հայրենիք, ազգ, պետություն հասկացությունների բացատրությունը:
- Հիմնական գծերով ներկայացնել հայոց պետականությունների պատմությունը:
- Գնահատել Տիգրան Մեծի վարած քաղաքականության բնույթը և գործունեությունը:
- Պարզաբանել Ավարայրի ճակատամարտը և նրա հետևանքները:
- Նկարագրել հայոց պետականության կորստի պատմությունը, վեր հանել դրա պատճառները:

- Պարզաբանել Արցախի և Սյունիքի ազատագրական կռիվները և դրանց հետևանքները:

- Վեր հանել հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականության հիմնական գծերը:
- Ներկայացնել Հայոց ցեղասպանության երիտթուքական ծրագիրը, ընթացքը և հետևանքները:
- Նկարագրել Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման պատմությունը:
- Ներկայացնել Սևրի պայմանագրի բովանդակությունը:
- Պարզաբանել Մոսկվայի և Կարսի պայմանագրերը:
- Ներկայացնել Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ ժողովրդի մասնակցությունը:
- Ներկայացնել Ղարաբաղյան շարժման պատճառները, սկիզբը, ընթացքը և հիմնավորել շարժման արդարացի բնույթը:
- Պարզաբանել հայկական հարցի լուծման հեռանկարները, տալ հարցի լուծման սեփական տեսակետը և հիմնավորել այն.:
- Ներկայացնել ՀՀ Ոստիկանության անցած պատմական ուղին:

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Մարդու իրավունքները և ոստիկանությունը», «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը»:

5. Առարկայի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների և սեմինարների տեսքով, լայնորեն կիրառելով ուսուցման ինտերակտիվ մեթոդները /«մտքերի տարափ», «զրույց», «բանավեճ» և այլն/: Դասավանդման ընթացքում օգտագործվում են նաև տեխնիկական միջոցներ, տեսանյութեր: Ժամեր կարելի է տրամադրել նաև էքսկուրսիաներ կազմակերպելու համար Ցեղասպանության թանգարան, պատմության և այլ թանգարաններ, մշակութային վայրեր:

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

ԹԵՄԱ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ /Մ.Թ.Ա. 3-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ 1375թ./

- Հայաստանում առաջին միասնական պետության՝ Արարատյան թագավորության հիմնադրման ու զարգացման գործընթացը:
- Երվանդունիների /Հայկազյան/ թագավորությունը:
- Արտաշեսյանների թագավորությունը:
- Արշակունիների թագավորությունը:

- Բագրատունիների թագավորությունը:
- Կիլիկիայի Հայկական պետությունը:

ԹԵՄԱ 2. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ /15-ՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ 19-ՐԴ ԴԱՐԻ վերջը/: ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ:

- Իսրայել Օրին և Հայ ազատագրական շարժումը:
- Ազատագրական պատերազմներն Արցախում և Սյունիքում:
- Հովսեփ Էմինը և ազատագրական շարժումը:
- Հայ ազգային կուսակցությունների հիմնադրումը:
- Ազատագրական պայքարը 19-րդ դարի 90-ական թվականներին:
- Հայկական հարցի միջազգայնացու:
- Հայերի ցեղասպանության պլանավորումը :
- Հայերի ցեղասպանության իրականացման երեք փուլերը :

ԹԵՄԱ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ /1918-1920թթ./

- 1918թ-ի հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը:
- Հայկական պետության կերտումը:
- Սևրի պայմանագիրը:
- Թուրք - հայկական պատերազմը:

ԹԵՄԱ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ /1920-1991թթ./

- Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում:
- Հայկական տարածքների խնդիրը:
- Հայ ժողովուրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին: Վերակառուցման ժամանակաշրջանը:
- Ղարաբաղյան շարժումը:

ԹԵՄԱ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ :

- ՀՀ անկախության հռչակումը:
- Արցախյան պատերազմը:
- ՀՀ սահմանադրությունը և փոփոխությունները:
- ՀՀ ներքին դրությունը:
- ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը:

ԹԵՄԱ 6. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Ոստիկանությունը 1918-1920թթ:
- ՀԽՍՀ Ոստիկանությունը 1920-1991թթ:
- ՀՀ Ոստիկանությունը 1991թ-ից մինչև մեր օրերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայոց պատմություն /հիմնահարցեր/ խմբ.՝Հր.Ռ.Սիմոնյանի, Երևան 2000թ.

2. «Հայրենիք և Ծառայություն» ՀՀ ՊՆ, Երևան 2001թ.

3. Հայաստանի ներքին գործերի նախարարները 1918-2008թթ., Երևան 2001թ.

4.Հայ ժողովրդի պատմություն ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիա Երևան 1971թ.